

Ա Կ Տ Ն Վ Հ 19

Հ Հ Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Զ Ի Ե Ր Ա Զ Գ Ա Կ Ո Ր Ս Ի Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ո Ւ Մ Ի Ր Ա Կ Ա Ն Ա Յ Վ Ա Ծ Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Հ Ս Կ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ա Ն Ա Ր Դ Յ Ո Ւ Ն Ք Ն Ե Ր Ի Մ Ա Ս Ի Ն

21 հունիսի 2013 թվական

գ. Երազգավորս

Համաձայն ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 190-Ա հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում 2012 թվականի վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի» և ի կատարումն ՀՀ Շիրակի մարզպետի 2013 թվականի մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Երազգավորսի համայնքում վարչական հսկողություն իրականացնելու մասին» թիվ 47 կարգադրության, աշխատանքային խումբը մասնակցությամբ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժնի պետ Ռուբեն Հարությունյանի (խմբի ղեկավար), նույն բաժնի գլխավոր մասնագետ Սուրեն Ավետիսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Զարիկ Մուրադյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Հուրիկ Մարտիրոսյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի գլխավոր մասնագետ Գագիկ Հարությունյանի (խմբի անդամ), ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի (մարզային հողային պետական տեսչության) գլխավոր մասնագետ Լյովա Հակոբյանի (խմբի անդամ), ինչպես նաև ՀՀ Շիրակի մարզի Երազգավորսի համայնքի ղեկավար Արտաշես Մխիթարյանի Երազգավորսի համայնքում կատարել է վարչական հսկողություն, որն ընդգրկել է 2010 թվականի ապրիլի 1-ից մինչև 2013 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակաշրջանը:

Վարչական հսկողությունն սկսվել է 2013 թվականի հունիսի 3-ին և ավարտվել՝ 2013 թվականի հունիսի 14-ին:

Վ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Հ Ս Կ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն համայնքի ավագանին 2012 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 16-Ն որոշմամբ ընդունել է իր կանոնակարգը: